ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N_____ Հասցեն. գ.Նորաշեն՝ փ-4, փկդ-3, շենք-12

Հեռ.093222994

ՈՐՈՇՈՒՄ

«12» ապրիլի 2019 N 14

Լսեցին-Նորաշեն համայնքի տարածքում սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման հարցերի վերաբերյալ քննարկումներ: /ԶԵԿ.Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ /

Համաձայն՝ « ՏԻՄ» մասին 2016թ. դեկտեմբերի 16-ի օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներին՝ համայնքի ավագանին քննարկում է Նորաշեն համայնքի տարածքում սանիտարական մաքրմանը և աղբահանությանը վերաբերող հարցեր:
Հարցի վերաբերյան զեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Գառնիկ Գասպարյանը, ինչպես նաև արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Խաչիկ Հակոբյանը և Արկադի Սարիբեկյանը:
Զեկուցողը ներկայացրեց այն փաստը, որ համայնքի տարածքում արդեն շուրջ 2 տարի է ինչ իրականացվում է աղբահանության ծառայություն, որի դիմաց բնակչության 1 շնչի հաշվով սահմանվել է ամսեկան 50 դրամ վճարի չափ, որը ուղղվում է բացառապես աղբահեռացման աշխատանքների կազմակերպմանը, սակայն համայնքի ավագանու կողմից սահմանված աղբահանության վճարների 100% գանձման պարագայում ևս, չի կարող ինքնածածկվել ծառայության լիարժեք մատուցման ծախսերը և իրականացնել սանիտարական բնույթի այլ աշխատանքներ:
Ուստի . նշված իրավիճակում անհրաժեշտ է նաև, որպէսզի համայնքի ավագանու կողմից լինի հետևողական վերաբերմունք . համայնքի բնակչության շրջանում հնչեցվեն հորդորներ և կոչեր՝ տարածքը չաղտոտելու , աղբը սահմանված վայրերում թափելու, աղբահանության դիմաց պահանջվող գումարները ժամանակին վճարելու ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հարցի վերաբերյալ հնչեցրած առաջարկությունները և մտահոգություններըընդունել ի գիտություն:
2.Համայնքապետարանի աշխատակազմին.
Համայնքում աղբահանության ծառայության պատշաճ կազմակերպման և սանիտարական

աշխատանքներ կազմակերպելու համար՝ համայնքի բյուջեի միջոցներից, թույլատրելիի սահմաններում կատարել ծախսեր:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ- 4, դեմ-0, ձեռնպահ-0

Կողմ՝ ..... Պ.Ավագյան

կողմ՝ ..... Խ.Հակոբյան

Կողմ՝ ..... Ռ.Սահակյան

Կողմ՝ ..... Ա.Մարիբեկյան

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ